5698

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«21» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 146 - 25

Նախաձեռնող՝ *Քաղաքացի Համլետ Վաչենանց*
ք. Երևան, Ֆուչիկի փողոց

Գործունեությունը՝ *Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոց 27/18, 27/19 և 29/4 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում*
Քաղաք Երևան

Առդիր՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 146 - 25

« 21 **»** Մայիսի **2025թ.**

Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոց 27/18, 27/19 և 29/4 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	Քաղաքացի Համլետ Վաչենանց
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվություն
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան

Ներածական մաս. Համաձայն քաղաքացի Համլետ Վաչենանցի կողմից ներկայացված գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոց 27/18, 27/19 և 29/4 հասցեներում նախատեսվում է բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթակա քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևանի համայնքի կողմից տրված 2024թ. նոյեմբերի 8-ի N 01/50-01-4143-Ա նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականներով ամրագրված 6735.7 հա ընդհանուր մակերեսով հողամասում՝ որոնց նպատակային նշանակությունն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, ընդհանուր բաժնային սեփականություն:

Նկարագրական մաս. Հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևան քաղաքի արևմտյան կողմում, Աջափնյակ վարչական շրջանի հյուսիսային մասում: Տեղամասը կառուցապատված է արտադրական և պահեստային շենքերով, տեղամասին հարակից են արտադրական և բազմագործառույթ շենք-շինություններով ծանրաբեռնված հողամասեր: Հարակից է Յու. Ֆուչիկի անվան փողոցին:

Տարածքում առկա են քանդման ենթակա արտադրամասեր:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Եղվարդի հրաբխային սարավանդի սահմաններում, Հրազդան գետի աջափնյա հրաբխային բարձրավանդակի վրա, նրա կենտրոնական մասում, անցքերն ունեն հարավ-արևմտյան ուղղություններ: Մակերեսը հարթ է: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1011.0-1105.0 մ սահմաններում: Հիդրոերկրաբանական տեսանկյունից ստորգետնյա ջրերը կապված են նեոգեն-չորրորդական հասակի հրաբխային առաջացումների

չստորաբաժանված համախմբերի հետ, որոնք հորատանցքերով մինչև 35.0 մ խորությունը չեն բացահայտվել:

Դիտարկվող տարածքը գտնվում է արդեն իսկ յուրացված միջավայրում, տեղանքում չկան էնդեմիկ կամ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները: Տարածքում և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային հուշարձանները:

Կառուցապատման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են՝

- ✓ հողի ընդհանուր մակերես - 6735,7 քմ,
- ✓ կառուցապատման մակերես - 2084 քմ (31.0 %),
- ✓ անջրանցիկ մակերես - 1852.3 քմ (27.5 %),
- ✓ կանաչապատման մակերես - 2795 քմ (41.5 %),
- ✓ ստորգետնյա կառուցապատման մակերես – 12461 քմ,
- ✓ վերգետնյա կառուցապատման մակերես – 43832 քմ,
- ✓ բնակարանների քանակ - 390 բնակարան,
- ✓ ավտոկայանատեղի - 284 հատ (72.0 %),:

Համաձայն նախագծային փաստաթղթի՝ կառույցը բաղկացած է երկու մասնաշենքերից և չորս ենթամասնաշենքերից: Հարկայնությունը՝ 16 հարկ բնակելի, 1 հարկ՝ հասարակական, 2 հարկ՝ ստորգետնյա ավտոկայանատեղի:

Օբյեկտի ընդհանուր շինարարության նորմատիվ տևողությունը կազմելու է 72 ամիս՝ շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման օրվանից:

Հաշվետվությունում ներկայացվել է նախատեսվող գործունեության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու կամ մեղմելու նպատակով:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Երևանի քաղաքապետարանը, Աջափնյակ վարչական շրջանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց առաջարկությունները և դիտողությունները ևս հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում:

Փորձաքննական գործընթացում Հաշվետվությունը ներկայացվել է քաղաքացի Համլետ Վաչենանցին լրամշակման, որտեղ մի շարք դիտողությունների հետ մեկտեղ եղել է նաև գործունեության ենթակա տարածքի հողամասի նպատակային նշանակության անհամապատասխանության դիտարկումը (հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների): Նախաձեռնողի կողմից հաշվետվությունը լրամշակվել է թերի, ինչպես նաև նշվածի վերաբերյալ չի ներկայացվել բավարար հիմնավորում (փոփոխված տարածքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթուղթ):

Գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել է 2 (երկու) հանրային լսում:

Երկրորդ հանրային լսման ընթացքում մասնակիցները բարձրաձայնեցին, որ տարածքում առկա է ռազմարդյունաբերական արտադրամաս, որի վերաբերյալ տեղեկատվությունը հավաստվեց փորձաքննական գործընթացում Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրված № 28/61512-25 գրությամբ, համաձայն որի գործող ռազմարդյունաբերական արտադրամասը փորձաքննության ներկայացված Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոց 27/18, 27/19 և 29/4 հասցեներում կառուցապատվող տարածքից գտնվում է 150 մ հեռավորության վրա, ինչի վերաբերյալ ՇՄԱԳ-ում չի ներկայացվել տեղեկատվություն: Վերոնշյալ հիմնավորումները հիմք են հանդիսացել պետական փորձաքննական բացասական եզրակացության համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 17-րդ հոդված 14-րդ մասի 3-րդ և 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետերը և հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները՝ քաղաքացի Համլետ Վաչենանցի կողմից փորձաքննության ներկայացված՝ Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոց 27/18, 27/19 և 29/4 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան